

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Կարեն Ավագյանի, Արա Բաբլոյանի և Մկրտիչ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված ցանկի 2-րդ կետի 13-րդ ենթակետը՝ առաջարկում ենք նախագծով փոփոխվող 24-րդ հոդվածի 1-ին մասը

«գործունեությունը» բառից հետո լրացնել «բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը» բառերով:

2. Փոփոխվող 24-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 8-րդ մասերը «համապատասխան» բառից հետո առաջարկում ենք լրացնել «որակավորում ունեցող» բառերով: Միաժամանակ, առավել նպատակահարմար կլիներ սահմանել նաև համապատասխան մասնագետների շրջանակը, ովքեր իրավունք կունենան զբաղվելու ախտաբանաանատոմիական գործունեությամբ:

3. Նախագծի համաձայն ախտաբանաանատոմիական տարբեր գործունեությունների իրականացման կարգերը սահմանվում են լիազոր մարմնի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է մեկ գործունեության տարատեսակների՝ առավել նպատակահարմար է դրանք կարգավորել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Միաժամանակ, նախագծի ներքին հակասությունները վերացնելու նպատակով առաջարկում ենք փոփոխվող հոդվածի 9-րդ մասը հանել, իսկ 2-րդ և 8-րդ մասերում համապատասխանաբար ամրագրել, որ ախտաբանաանատոմիական հետազոտության անցկացման կարգը և ախտաբանաանատոմիական փորձաքննության իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Նախագծով փոփոխվող 24-րդ հոդվածի 5-րդ մասում որպես պարտադիր հերձման պահանջ սահմանվել է միայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների առկայության դեպքը, մինչդեռ մի շարք այլ դեպքերում ևս անհրաժեշտ է իրականացնել պարտադիր ախտաբանաանատոմիական

հերձումներ՝ մահվան պատճառները պարզելու նպատակով: Օրինակ, երբ հիվանդը մահացել է բուժհաստատություն ընդունվելուց հետո՝ առաջին 24 ժամվա ընթացքում, կամ, երբ ախտորոշումը հայտնի չէ և այլն: Այս առումով անհրաժեշտ է վերանայել պարտադիր հերձման դեպքերը, իսկ դրանց ցանկը սահմանել օրենքով:

5. Նախագծով փոփոխվող 24-րդ հոդվածի 10-րդ մասն առաջարկում ենք հանել, քանի որ ախտաբանաանատոմիական թափոնները, ըստ էության, բժշկական վտանգավոր թափոններ են, որոնց ոչնչացման կարգը սահմանող պահանջները սանիտարական նորմեր են, որոնք սահմանելու լիազորությունը «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված է առողջապահության բնագավառի լիազոր մարմին: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ բժշկական թափոնների, այդ թվում՝ ախտաբանաանատոմիական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ նորմատիվները հաստատվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանով:

6. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախագծով առաջարկվում է ավելացնել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված բժշկական փորձաքննությունների ձևերը՝ սահմանելով նաև «ախտաբանաանատոմիական փորձաքննություն» հասկացությունը՝ անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել օրենքի 22-րդ հոդվածով սահմանվող փորձաքննությունների ձևերում:

7. Տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակ սահմանել նախագծում օգտագործվող որոշ տերմիններ, ինչպիսիք են, օրինակ, «ախտաբանաանատոմիական գործունեություն»,

«ախտաբանաանատոմիական հետազոտություն», «ախտաբանաանատոմիական փորձաքննություն», «բժշկական փաստաթղթեր», «մահացածի կյանքի օրոք հայտնած կամք»: Անհրաժեշտ է նաև հստակեցնել օրենքի իմաստով կիրառվող «իրավապահ մարմիններ» հասկացությունը, քանի որ այն որպես միասնական հասկացություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չէ և, համաձայն ճյուղային օրենսդրության, կիրառվում է նաև մաքսային և հարկային մարմինների նկատմամբ:

8. Նախագիծն անհրաժեշտ է լրամշակել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխան, մասնավորապես`

1) նախագծի վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություն» բառով, քանի որ նախագծի տեքստում նախատեսված է միայն փոփոխություն.

2) նախագծի 2-րդ հոդվածում «հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև փաթեթում ընդգրկված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

Ելնելով շարադրվածից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս,

հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Հ. Քուշկյանը:

Ներկայացնում ենք օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ընդունումից հետո դրանց կատարումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1-ին հոդվածի 2-րդ մաս՝ ՀՀ առողջապահության նախարարի հրաման (6 ամիս),

1-ին հոդվածի 3-րդ մաս՝ ՀՀ կառավարության որոշում (6 ամիս),

1-ին հոդվածի 5-րդ մաս՝ ՀՀ կառավարության որոշում (6 ամիս),

1-ին հոդվածի 7-րդ մաս՝ ՀՀ կառավարության որոշում (6 ամիս),

1-ին հոդվածի 8-րդ մաս՝ ՀՀ առողջապահության նախարարի հրաման (6 ամիս),

1-ին հոդվածի 9-րդ մաս՝ ՀՀ կառավարության որոշում (6 ամիս),

1-ին հոդվածի 10-րդ մաս՝ ՀՀ կառավարության որոշում (6 ամիս):

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի փաթեթի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Եզրակացություն

**<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

<<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագծերն ունեն ռազմավարական տեսանկյունից չեզոք ազդեցություն, իսկ շահառուների վրա դրական ազդեցություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական  
իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում  
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների  
նախագծերի վերաբերյալ**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական  
իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում  
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն  
իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի  
հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի  
հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման  
իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված  
Կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն  
պարունակում:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ**

**Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Բնակչության բժշկական օգնության  
և սպասարկման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում  
կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի  
Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների  
նախագծերի**

**1.Նախագծի կարգավորման արդյունքները:** Առաջարկվող նախագծերի ընդունման դեպքում կարգավորման արդյունքները կլինեն հետևյալը

1)օրենքով կկարգավորվեն ախտաբանատոմիական գործունեության իրականացման ձևերը, (հետազոտություն, հերձում, փորձաքննություն), ինչը գործող օրենսդրությամբ սահմանված չէ (սահմանված է միայն հերձում իրականացնելու կարգը), ինչը որոշակիորեն կնպաստի ախտաբանատոմիական բժշկական օգնության և սպասարկման զարգացմանը,

2)կամրագրվեն օրենքի հիման վրա ախտաբանաանատոմիական գործունեության իրականացման կարգերը կառավարությանը կամ լիազոր առողջապահության բնագավառում լիազոր մարմնին վերապահելու դրույթ, որոնք ընդունվելու դեպքում ոլորտի իրավական կարգավորումը կհստակեցվի, արդյունքում ախտաբանաանատոմիական գործունեության արդյունավետությունը բարձրանա,

3) կսահմանվի պարտադիր հերձման պահանջ շրջապատի համար ներկայացված հիվանդություններով հիվանդացության դեպքերի համար, մինչդեռ մի շարք այլ դեպքերում ևս անհրաժեշտ է պարտադիր ախտաբանաանատոմիական հերձումներ՝ մահվան պատճառները պարզելու իմաստով,

4)տնային հերձումներ իրականացնելու դեպքում կսահմանվի վարչական պատասխանատվություն:

Ընդհանուր առմամբ օրենքների ընդունումը կունենա դրական ազդեցություն՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակելու դեպքում:

**2.Ախտաբանաանատոմիական բժշկական օգնության և սպասարկման բնագավառում վարվող քաղաքականության, ինչպես նաև համեմատական վիճակագրական տվյալները**



**Ախտաբանաանատոմիական բժշկական օգնության և սպասարկման բնագավառում** ռազմավարական ծրագրեր չեն ընդունվել, իրականացվում է ընթացիկ գործունեության, այդուհանդերձ վարվող ընթացիկ քաղաքականությունն ուղղված է համակարգի գործունեության վերահսկելությունն ու հաշվետվողականությունն բարձրացնելուն: Համեմատական վիճակագրական տվյալներ կարգավորվող հարաբերությունների վերաբերյալ առկա չեն:

**3.Նախագծի կիրարկման արդյունքում կանխատեսող հետևանքները գնահատելու ժամանակացույցը**  
Օրենքն ուժի մեջ մտնելուց 1 տարի հետո:

**4.Նախագծի կարգավորման վերաբերյալ առաջարկվող տարբերակ (առաջարկություններ)**

1.Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 1-ին մասում, նկատի ունենալով ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ հաստատված ցանկի 2-րդ կետի 13-րդ ենթակետը, «գործունեությունը» բառից հետո լրացնել «բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը» բառերը,

2. Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 2-րդ, 3-րդ, 8-րդ մասերում «համապատասխան» բառերից հետո լրացնել «որակավորում ունեցող» բառերը: Միաժամանակ, առավել նպատահարմար կլիներ սահմանել նաև, համապատասխան մասնագետների շրջանակը, ովքեր իրավունք կունենան զբաղվելու ախտաբանաանատոմիական գործունեությամբ, հստակեցնել որոշ տերմինների և հասկացությունների օգտագործումը, ինչպիսիք են «բժշկական փաստաթղթեր», «մահացածի կյանքի օրոք հայտնած կամք» և այլ հասկացություններ:

3. Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 2-րդ, 3-րդ և 9-րդ մասերում սահմանվում է որ ախտաբանականատոմիական տարբեր գործունեությունների իրականացման կարգերը սահմանվում են լիազոր մարմնի կամ կառավարության կողմից: Նկատի ունենալով, որ դրանք մեկ գործունեության տարատեսակներ են, առավել նպատակահարմար է դրանք սահմանել մեկ կարգով` ՀՀ կառավարության կողմից,

4. Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 5-րդ մասում պարտադիր հերձման պահանջ է սահմանվել միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված շրջապատի համար ներկայացված հիվանդություններով հիվանդացության դեպքերի համար, մինչդեռ մի շարք այլ դեպքերում ևս անհրաժեշտ է պարտադիր ախտաբանաանատոմիական հերձումներ` մահվան պատճառները պարզելու իմաստով, օրինակ` երբ հիվանդը մահացել է բուժհաստատություն ընդունվելուց հետո` առաջին 24 ժամվա ընթացքում, կամ երբ ախտորոշումը հայտնի չէ և այլն:

Այս առումով կարծում եմ պարտադիր հերձման դեպքերը անհրաժեշտ է վերանայել և ցանկը սահմանել օրենքով,

5. Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 7-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել կամ սահմանել օրենքի իմաստով կիրառվող «իրավապահ մարմիններ» հասկացությունը, նկատի ունենալով, որ այն որպես միասնական հասկացություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ և «իրավապահ մարմիններ» հասկացությունը, համաձայն ճյուղային օրենսդրության, կիրառվում է մաքսային և հարկային մարմինների նկատմամբ ևս,

6. Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 2, 8-րդ և 9-րդ մասերում առկա են հակասություններ. այսպես՝ 2-րդ մասում ասվում է, որ ախտաբանաանատոմիական հետազոտության կարգը սահմանում է լիազոր մարմինը, իսկ 9-րդ մասում՝ կառավարությունը, նմանապես 8-րդ մասում խոսվում է, որ «ախտաբանաանատոմիական փորձաքննությունը իրականացվում է լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով», իսկ 9-րդ մասում սահմանվում է, որ փորձաքննության անցկացման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության կողմից, ինչը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:

7. Նախագծով փոփոխվող հոդված 24-ի 10-րդ մասը առաջարկում եմ հանել, քանի որ ախտաբանաանատոմիական թափոններն, ըստ էության բժշկական վտանգավոր թափոններ են հանդիսանում, որոնց ոչնչացման կարգը սահմանող պահանջները սանիտարական նորմեր են, որոնք սահմանելու լիազորությունը «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան սահմանում է առողջապահության բնագավառի լիազոր մարմինը: Միաժամանակ անհրաժեշտ եմ համար նշել, որ բժշկական թափոնների, այդ թվում ախտաբանաանատոմիական թափոնների գործածությանն ներկայացվող հիգիենիկ նորմատիվներն հաստատվել են ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հարմանով,

8. Նկատի ունենալով, որ նախագծով առաջարկվում է ավելացնել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված բժշկական փորձաքննությունների ձևերը՝ սահմանելով նաև «ախտաբանաանատոմիական փորձաքննություն», անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել օրենքի 22-րդ հոդվածով սահմանվող փորձաքննությունների ձևերում,

9. նախագծում անհրաժեշտ է սահմանել «ախտաբանաանատոմիական գործունեություն», «ախտաբանաանատոմիական հետազոտություն» և «ախտաբանաանատոմիական փորձաքննություն» հասկացությունների բովանդակությունը:

## ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” և “Վարչական իրավախախտումների վերաբերյալ” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. “Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” և “Վարչական իրավախախտումների վերաբերյալ” ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին” ՀՀ օրենքների (այսուհետ` օրենքներ) նախագծերի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների` մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանում:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չեն հակասում: Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

Ներկայացված նախագծերի նպատակն է կարգավորել ախտաբանաանատոմիական գործունեության իրականացման գործընթացը, ինչի արդյունքում ակնկալվում է ախտաբանաանատոմիական գործունեության արդյունավետության, վերահսկողության ու հաշվետվողականության բարձրացում: Հաշվի առնելով, որ կարգավորվող հարաբերությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն, ինչպես նաև այն, որ նախագծերի կիրարկման արդյունքում կանխատեսվող հետեւանքները հնարավոր է գնահատել օրենքն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո, ուստի վերոնշյալ նախագծերի փաթեթի բյուջետային բնագավառում կարգավորումը ՀՀ պետական բյուջեի մուտքերի մասով հնարավոր չէ գնահատել:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման:**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

*Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:*

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ վերոնշյալ Նախագծերի ընդունման դեպքում, դրանց կիրարկման արդյունքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿԿՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին»  
Հայաստանի Հանրապետության 1996 թ-ի մարտի 4-ին ՀՕ-42 օրենքի 24-րդ հոդվածը  
շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ՀՈԴՎԱԾ 24.** Ախտաբանաանատոմիական գործունեություն

1. Ախտաբանաանատոմիական գործունեությունը իրականացվում է ախտաբանաանատոմիական հետազոտությունների, ախտաբանաանատոմիական հերձումների և ախտաբանաանատոմիական փորձաքննության միջոցով:
2. Ախտաբանաանատոմիական հետազոտությունները իրականացվում են համապատասխան մասնագետ-բժիշկների կողմից լիցենզավորված բժշկական հաստատություններում հիվանդությունների ախտորոշման նպատակով: Լիազոր մարմինը հաստատում է ախտաբանաանատոմիական հետազոտությունների ցանկը և անցկացման կարգը:
3. Ախտաբանաանատոմիական հերձումները իրականացվում են համապատասխան մասնագետ-բժիշկների կողմից լիցենզավորված բժշկական հաստատություններում անձի մահվան պատճառը որոշելու և նրա հիվանդության ախտորոշումը ճշգրտելու նպատակով: Ախտաբանաանատոմիական հերձումների իրականացման կարգը հաստատվում է կառավարության կողմից:
4. Ախտաբանաանատոմիական հերձումները կարող են չիրականացվել՝ հիմք ընդունելով մահացածի կյանքի օրոք հայտնաձև կամքը, կամ նրա հարազատների կամ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
5. Ախտաբանաանատոմիական հերձումները պարտադիր կարգով իրականացվում են կառավարության կողմից հաստատված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքում: Պարտադիր կարգով իրականացվող ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը սահմանվում է կառավարության կողմից:
6. Հիվանդանոցում մահացած անձանց դիակները ենթարկվում են ախտաբանաանատոմիական հերձումների, եթե դրանք չեն հանդիսանում օրենսդրությամբ սահմանված դատաբժշկական փորձաքննության դեպքեր:
7. Մահվան կամ հիվանդության ախտորոշման վերաբերյալ ախտաբանաանատոմիական հետազոտության եզրակացությունը կցվում է բժշկական փաստաթղթերին, իսկ դրա պահանջի դեպքում տրվում է



հարազատներին, օրինական ներկայացուցչին կամ իրավապահ մարմիններին՝ կառավարության կողմից սահմանված կարգով:

8. Ախտաբանաանատոմիական փորձաքննությունը իրականացվում է լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով համապատասխան մասնագետի և այլ բժշկական մասնագետների մասնակցությամբ՝ ախտաբանական հտազոտությունների արդյունքների և կլինիկական տվյալների համադրման և վերջնական ախտորոշման հաստատման նպատակով:

9. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների, և փորձաքննության անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10. Ախտաբանաանատոմիական թափոնների ոչնչացման կարգը հաստատում է կառավարությունը:»

## **ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Մույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ՆԱԽԱԳԻԾ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈՂՎԱԾ 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 47.1 -րդ հոդվածը երկրորդ մասից հետո լրացնել նոր երրորդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«Ախտաբանաանատոմիական հերձույթների անցկացումը տնային պայմաններում

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:»:

## **ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Մույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների ընդունման անհրաժեշտության մասին

Ախտաբանաանատոմիական գործունեությունը՝ հանդիսանալով բուժական և ախտորոշման անբաժանելի մասնիկ, կարևոր դեր ունի հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման և բուժման գործընթացում: Ախտաբանաանատոմիական գործունեության շնորհիվ հայտնաբերվում է հիվանդության բնույթը, բնակչության հիվանդացության և մահացության կառուցվածքը: Վերջինը թույլ է տալիս իրականացնել միջոցառումներ ուղղված բնակչության առողջության պահպանմանը, ձևավորել պետական չափորոշիչները և ախտաբանաանատոմիական գործունեության ֆինանսավորման գերակայությունները: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում առողջապահության զարգացումը ենթադրում է բուժհաստատություններում որակյալ ախտորոշիչ և բուժական ծառայությունների տրամադրում: Իսկ մասնագիտացված բժշկական ծառայությունը իր մեջ ներառում է ախտաբանաանատոմիական հետազոտությունների իրականացում:

Ախտաբանաանատոմիական գործունեությունը մինչ այժմ կարգավորվում էր «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 1996 թվականին: Օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է միայն ախտաբանաանատոմիական հերձումների իրականացման համար կառավարության կողմից սահմանվելիք կարգի պահանջը: Ախտաբանաանատոմիական գործունեության օրենսդրության թերի կարգավորումը խոչընդոտում է սույն ոլորտի նորմալ գործնության իրականացմանը: Բացի այդ օրենքով կարգավորված չեն այնպիսի սկզբունքային հարցեր, ինչպիսիք են մարդու իրավունքը ախտաբանաանատոմիական հերձումներից հրաժարվելու վերաբերյալ, ախտաբանաանատոմիական հետազոտությունների և հերձումների անցկացման վայրը և մասնագետների պահանջը, ախտաբանաանատոմիական թափոնները և այլ հարցեր:

Ներկայացված օրենսդրական նախաձեռնությունը ուղղված է լուծելու վերոնշյալ հարցերը՝ հաշվի առնելով ինչպես ներկա համակարգում առկա հիմնախնդիրները, այնպես էլ միջազգային փորձը և պահանջները: